ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Կ-116-10.12.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-407-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«*Հոդված 12.* Հարկային ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունեցող անձինք

1. Օրենքով սահմանված կարգով հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն հարկային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով (նկարագրով) ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, բարձրագույն կրթություն ունեցող 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր՝

1) հաջողությամբ ավարտել են սույն գլխով նախատեսված հարկային ծառայողի պատրաստման դասընթացը, հարկային մարմնի ուսումնական կենտրոնի կողմից ստացել են հավաստագիր և ընդգրկվել են հարկային ծառայողների թեկնածուների ցուցակում կամ

2) հանդիսանում են հարկային ծառայողներ և ացնել են սույն գլխով նախատեսված անհրաժեշտ վերապատրաստում:

2. Հարկային ծառայության պաշտոնի նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

3. Հարկային ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար եւ կրտսեր թափուր պաշտոններ առաջանալու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են հարկային ծառայողների թեկնածուների ցուցակներից կամ վերապատրաստում անցած հարկային ծառայողներից հարցազրույցի միջոցով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

4. Կառավարությունը սահմանում է հարկային մարմինների կողմից իրականացվող՝ օպերատիվ-հետախուզական գործունեության հետ կապված այն պաշտոնների անվանացանկը, որոնցում նշանակումները կատարվում են՝ հարկային մարմնի ղեկավարի կողմից առնաց սույն օրենքով նախատեսված պաշտոնների նշանակման պայմանների պահպանման:

Հոդված 2. Օրենքի 18-րդ եւ 19-րդ հոդվածները ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենքը լրացնել 17.1-րդ, 17.2-րդ եւ 17.3-րդ հոդվածներով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 17.1.* Հարկային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելությունը, հարկային ծառայողի պատրաստումն ուսումնական կենտրոնում

1. Հարկային ծառայողի պատրաստման նպատակով հարկային մարմնի ուսումնական կենտրոնը կազմակերպում և անցկացնում է հարկային ծառայողի պատրաստման դասընթացի մասնակցության համար ընդունելություն (այսուհետ՝ ընդունելություն):

2. Ընդունելության կարգը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը: Ընդունելության կարգով կարգավորվում են նաև ընդունելության հայտարարության հրապարակման, ընդունելության անցկացման պարբերականության, ընդունելության տեղերի սահմանման, ընդունելության դիմումների և կից փաստաթղթերի ներկայացման, թեստավորման և հարցազրույցի անցկացման, բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ներկայացման, ընդունելության արդյունքների ամփոփման հետ կապված հարաբերությունները:

3. Ընդունելությանը չի կարող մասնակցել այն քաղաքացին, որը չի բավարարում սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված տարիքային ցենզի, բարձրագույն կրթության և հայերենին տիրապետելու և 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, կամ առկա է «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որեւէ մեկը:

4. Ընդունելության հայտարարությունը, ի թիվս այլ տեղեկատվության, պետք է պարունակի հետևյալ տվյալները.

1) ընդունելությանը ներկայացվող պահանջները.

2) ընդունելությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, այդ թվում՝ հարկային մարմնի ղեկավարի կողմից հաստատված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձևանմուշը.

3) ընդունելության տեղերի քանակը:

5.–Եթե ընդունելության արդյունքում մասնակիցները հավաքում են հավասար միավորներ, ապա ընդունելության տեղերի քանակը կարող է ավելացվել համապատասխան հավասար միավորներ ստացած մասնակիցների թվով:

6. Ընդունելությունն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց:

7. Թեստավորման պահանջները սահմանում է հարկային մարմնի ղեկավարը, որով սահմանվում են թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձևավորելու պահանջները, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, թեստավորման հաղթահարման համար անհրաժեշտ նվազագույն միավորը:

8. Ընդունելության երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում հարկային մարմնի ղեկավարի կողմից սահմանված թեստավորման հաղթահարման համար անհրաժեշտ նվազագույն և դրանից բարձր միավորներ ստացած անձինք:

9. Հարցազրույցն անցկացնում է հարկային մարմնի ղեկավարի կողմից ձևավորած հանձնաժողովը:

10. Հարցազրույցի կազմակերպման համար ձեվավորված հանձնաժողովը դիմողների լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը հաշվի է առնվում ընդունելության հարցազրույցի փուլը հաղթահարած մասնակիցներին որոշելու համար:

11. Հարկային ծառայողի պատրաստման դասընթացի կազմակերպման կարգը, այդ թվում՝ դասընթացի բովանդակությունը, տեվողությունը, դասընթացի ընթացում քննությունների եվ ավարտական քննության կազմակերպման, այդ թվում՝ ավարտական քննական հանձնաժողովի կազմավորման կարգը, դասընթացի արդյունքներն ամփոփելու, դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու չափանիշները սահմանում է հարկային մարմնի ղեկավարը: Դասընթացը պետք է պարունակի նաև բարեվարքությանը վերաբերող կրթական բաղադրիչ:

12. Հարկային ծառայողի պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած անձանց ուսումնական կենտրոնի կողմից էլեկտրոնային եղանակով տրամադրվում է դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու հավաստագիր, որի ձեվը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը:

13. Հարկային մարմնի ղեկավարի սահմանած կարգով հարկային ծառայողների պատրաստումներ կարող են անցկացվել նաև առանձին պաշտոններ զբաղեցնելու համար:

Հոդված 17.2. Հարկային ծառայողների թեկնածուների ցուցակը

1. Հարկային ծառայողի պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու հավաստագիր ունեցող անձինք ընդգրկվում են հարկային մարմնի կողմից վարվող հարկային ծառայողների թեկնածուների ցուցակներում՝ դասընթացի ավարտին իրենց կողմից առավել բարձրից ցածր միավորներ հավաքելու սկզբունքից ելնելով: Ընդ որում, սույն օրենքի 17.3-րդ հոդվածով նախատեսված կարգով պաշտոնի նշանակումը հիմք չէ անձին ցուցակից հանելու համար:

2. Հարկային ծառայողների թեկնածուների ցուցակում ընդգրկելու, ցուցակներից հանելու և ցուցակների վարման կարգը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը:

3. Հարկային ծառայողների թեկնածուների ցուցակում միանգամյա ընդգրկված լինելու առավելագույն ժամկետը երեք տարի է: Ցուցակում ընդգրկված լինելու առավելագույն ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրը թեկնածուն ինքնաշխատ եղանակով հանվում է ցուցակից: Հարկային ծառայողների թեկնածուների ցուցակի թափուր համարները լրացվում են հաջորդաբար՝ նվազման կարգով ինքնաշխատ եղանակով:

Հոդված 17.3. Հարկային ծառայության պաշտոնի նշանակումը

1. Հարկային ծառայության պաշտոնին նշանակումն իրականացվում է հարկային ծառայողների թեկնածուների ցուցակներում ներառված անձանցից և վերապատրաստում անցած անձանցից սույն հոդվածով նախատեսված հարցազրույցի միջոցով:

2. Հարցազրույցի հրավիրում են՝

1) հարկային ծառայողների թեկնածուների ցուցակում ընդգրկված, հարկային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին բավարարող 5 ամենաբարձր միավորներ ունեցող բոլոր անձինք: Եթե սույն կետի պահանջներին բավարարող անձինք հրաժարվում են մասնակցել հարցազրույցին, ապա հարցազրույցի հրավիրվում են հաջորդաբար ավելի բարձր միավորներ ունեցող անձինք.

2) վերապատրաստում (այդ թվում՝ առաջխաղացման նպատակով) անցած և տվյալ պաշտոնում նշանակվելու համար դիմում ներկայացրած անձինք:

3. Հարցազրույցի անցկացման նպատակով ձեվավորվում է հանձնաժողովը: Հարցազրույցին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաեւ հոգեբան:

4. Հարցազրույցի նպատակն է հարկային ծառայողի պաշտոնում արդյունավետ գործելու համար հարկային ծառայողի թեկնածուի հմտություններն ու որակները բացահայտելը: Անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտվում են թեկնածուի մասնագիտական աշխատանքի փորձառությունը, հարկային ծառայող դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, հարկային ծառայությանը վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, վարվեցողություն, պատասխանատվության զգացում, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ եւ հարկային ծառայողի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ) գնահատելու միջոցով:

5. Հարցազրույցից առաջ՝ հարցազրույցի հանձնաժողովի որոշմամբ հարցազրույցի հրավիրված թեկնածուները կարող են անցնել հոգեբանական թեստավորում: Հոգեբանական թեստը կազմվում է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հատկանիշները գնահատելու նպատակով, եւ դրա արդյունքն ստացվում է ըստ նախապես մշակված էլեկտրոնային համակարգի: Հարկային մարմնի ղեկավարը հաստատում է հոգեբանական թեստավորման չափանիշները եւ անցկացման կարգը եւ ապահովում է թեստավորման անցկացման համար անհրաժեշտ պայմանները: Թեստի արդյունքներն ունեն խորհրդատվական նշանակություն, տրամադրվում են թեկնածուին եւ հանձնաժողովին:

6. Հարցազրույցի փուլը հաղթահարում է մեկ մասնակից: Հարցազրույցի արդյունքում հանձնաժողովը հարկային մարմնի ղեկավարին է ներկայացնում եզրակացություն հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ՝ նշելով հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին:

7. Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմնի ղեկավարը հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնի:

8. Հարցազրույցի կազմակերպման եւ անցկացման կարգը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը, ինչպես նաեւ հարցազրույցի հանձնաժողովի կազմը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը:

9. Հարկային ծառայության պաշտոններում պաշտոնի նշանակում եւ պաշտոններից ազատում է հարկային մարմնի ղեկավարը:

10. Հարկային ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձը պաշտոնի նշանակվում է մինչեւ ինն ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

Հոդված 4. Օրենքի 19.1-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.՝

Հոդված 19.1. Հարկային ծառայության կադրերի ռեզերվը, կատարողականի գնահատումը, վերապատրաստումը

1. Հարկային ծառայության կադրերի ռեզերվի, կատարողականի գնահատման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

2. Հարկային բոլոր ծառայողները ենթակա են հարկային մարմնի ղեկավար սահմանված կարգով պարտադիր վերապատրաստման ոչ ուշ, քան 3 տարին մեկ անգամ:

3. Հարկային ծառայողների առաջխաղացման նպատակով հարկային մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով կարող են կազմակերպվել նաև հարկային ծառայողի պաշտոնի խմբի համար կամ կառուցվածքային ստորաբաժանման առանձնահատկություններով պայմանավորված վերապատրաստման դասընթացներ, որոնք հաջողությամբ ավարտելու դեպքում կարող են հիմք հանդիսանալ հարկային ծառայողի ծառայողական առաջխաղացման համար՝ սույն օրենքի 17.3-րդ հոդվածով սահմանված հարցազրույցի միջոցով նշանակում կատարելու համար: Ընդ որում, սույն մասով նախատեսված վերապատրասոումը հաջողությամբ ավարտելու հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ նաև հարկային ծառայողին հարկային ծառայության մեկ այլ հավասարազոր պաշտոնի նշանակման համար:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված վերապատրաստման ծրագրերի բովանդակութանը ներկայացվող պահանջները կարող են տարանջատվել ըստ հարկային ծառայության պաշտոնների խմբերի և կառուցվածքային ստորաբաժանումների:

5. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված վերապատրաստման ծրագրերը պետք է պարունակեն բարեվարքության համակարգին վերաբերող կրթական բաղադրիչ՝ ըստ հարկային ծառայության պաշտոնների խմբերի:

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված վերապատրաստման ծրագրերի բովանդակութանը ներկայացվող պահանջները սահմանում է հարկային մարմնի ղեկավարը:

7. Վերապատրաստման ծրագիրը(այդ թվում առաջխաղացման) հաջողությամբ ավարտելու դեպքում հարկային մարմնի ուսումնական կենտրոնի կողմից էլեկտրոնային եղանակով տրամադրվում է ծրագիրը հաջողությամբ ավարտելու հավաստագիր, որը գործում է 3 տարի ժամկետով:

Հոդված 5. Օրենքը լրացնել 25.1-րդ հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

Հոդված 25.1. Հարկային ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության ժամանակ

1. Համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության դեպքում հարկային ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝

1) հարկային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելության թեստավորման կամ հարցազրույցի փուլը չհաղթահարելը.

2) դասընթացը հաջողությամբ հաղթահարած չհամարվելու արդյունքում հարկային ծառայողների թեկնածուների ցուցակներում չներառվելը.

3) հարկային ծառայության պաշտոնի սույն օրենքի 17.3-րդ հոդվածով սահմանված կարգով չնշանակելը.

4) վերապատրաստման ծրագրին երկու անգամ անընդմեջ չմասնակցելը կամ վերապատրաստման արդյունքում երկու անգամ անընդմեջ վերապատրաստման ծրագիրը հաջողությամբ ավարտելու հավաստագիր չստանալը.

5) հաստիքների կրճատումը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված պաշտոնից ազատման հիմքերը կիրառելի են միայն կառուցվածքային փոփոխության ենթարկվող ստորաբաժանումների հարկային ծառայողների պաշտոնից ազատման հարաբերությունների նկատմամբ:

3. Հարկային ծառայողին պաշտոնից ազատելու հիմք է նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական մարմնի վերակազմակերպումը, եթե այն ուղեկցվում է հաստինքերի կրճատմամբ, կամ գործունեության դադարեցումը:

4. Հարկային ծառայողները հարկային ծառայողի պատրաստման դասընթացին և վերապատրաստմանը մասնակցելու դեպքում դասընթացին մասնակցության ամբողջ ժամանակահատվածում պահպանում են իրենց աշխատատեղը և հիմնական աշխատավարձը:

Հոդված 6. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) սույն օրենքի 25.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերը.»:

Հոդված 7. Օրենքը լրացնել նոր 3.1-րդ գլխով հետեւյալ բովանդակությամբ.

ԳԼՈՒԽ 3.1.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հոդված 26.2. Ուսումնական կենտրոնը

1. Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի ուսումնական կենտրոնի (այսուհետ՝ Ուսումնական կենտրոն) գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

2. Ուսումնական կենտրոնը, սույն օրենքին և իր կանոնադրության նպատակներին համապատասխան, կազմակերպում է՝

1) հարկային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց մասնագիտական վերապատրաստումը (այդ թվում՝ առաջխաղացման նպատակով վերապատրաստումը).

2) հարկային ծառայության առանձին պաշտոններ զբաղեցնելու համար հարկային ծառայողների պատրաստումը.

3) հարկային ծառայողի պատրաստման դասընթացի իրականացումը,

4) հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով ուսուցումը.

5) այլ մասնագիտացված դասընթացներ և կրթական ծրագրեր:

3. Ուսումնական կենտրոնը, այդ թվում՝ հարկային ծառայողների պատրաստումներն ու վերապատրաստումները ֆինանսավորվում են պետական բյուջեից, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Հոդված 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022թ հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքը կառուցվածքային փոփոխությունների չենթարկվող ստորաբաժանումներում պաշտոնների նշանակման մասով ուժի մեջ է մտնում 2024թ հունվարի 1-ից: Մինչեւ 2024թ. հունվարի 1-ը կառուցվածքային փոփոխությունների չենթարկվող ստորաբաժանումներում նշանակումներ կատարելու հարաբերությունները կարգավորվում են մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող կարգավորումներով:

–ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.- «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-407-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«*Հոդված 12.* Հարկային ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունեցող անձինք

1. Օրենքով սահմանված կարգով հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն հարկային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով (նկարագրով) ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, բարձրագույն կրթություն ունեցող 18 տարին լրացած ~~սույն գլխով նախատեսված հարկային ծառայողի պատրաստման դասընթացը հաջողությամբ ավարտած, հարկային մարմնի ուսումնական հաստատության կողմից հավաստագիր ստացած և հարկային ծառայողների թեկնածուների ցուցակում ընդգրկված~~ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները~~:~~, ովքեր՝

1) հաջողությամբ ավարտել են սույն գլխով նախատեսված հարկային ծառայողի պատրաստման դասընթացը, հարկային մարմնի ուսումնական կենտրոնի կողմից ստացել են հավաստագիր և ընդգրկվել են հարկային ծառայողների թեկնածուների ցուցակում կամ

2) հանդիսանում են հարկային ծառայողներ և ացնել են սույն գլխով նախատեսված անհրաժեշտ վերապատրաստում:

2. Հարկային ծառայության պաշտոնի նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

3. Հարկային ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար եւ կրտսեր թափուր պաշտոններ առաջանալու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են հարկային ծառայողների թեկնածուների ցուցակներից կամ վերապատրաստում անցած հարկային ծառայողներից հարցազրույցի միջոցով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

4. Կառավարությունը սահմանում է հարկային մարմինների կողմից իրականացվող՝ օպերատիվ-հետախուզական գործունեության հետ կապված այն պաշտոնների անվանացանկը, որոնցում նշանակումները կատարվում են՝ հարկային մարմնի ղեկավարի կողմից առնաց սույն օրենքով նախատեսված պաշտոնների նշանակման պայմանների պահպանման:

Հոդված 2. Օրենքի 18-րդ եւ 19-րդ հոդվածները ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենքը լրացնել 17.1-րդ, 17.2-րդ եւ 17.3-րդ հոդվածներով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 17.1.*- Հարկային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելությունը, հարկային ծառայողի պատրաստումն ուսումնական ~~հաստատությունում~~կենտրոնում

1. Հարկային ծառայողի պատրաստման նպատակով հարկային մարմնի ուսումնական ~~հաստատությունը~~կենտրոնը կազմակերպում և անցկացնում է հարկային ծառայողի պատրաստման դասընթացի մասնակցության համար ընդունելություն (այսուհետ՝ ընդունելություն):

2. Ընդունելության կարգը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը: Ընդունելության կարգով կարգավորվում են նաև ընդունելության հայտարարության հրապարակման, ընդունելության անցկացման պարբերականության, ընդունելության տեղերի սահմանման, ընդունելության դիմումների և կից փաստաթղթերի ներկայացման, թեստավորման և հարցազրույցի անցկացման, բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ներկայացման, ընդունելության արդյունքների ամփոփման հետ կապված հարաբերությունները:

3. Ընդունելությանը չի կարող մասնակցել այն քաղաքացին, որը չի բավարարում սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված տարիքային ցենզի, բարձրագույն կրթության և հայերենին տիրապետելու և 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, կամ առկա է «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որեւէ մեկը:

4. Ընդունելության հայտարարությունը, ի թիվս այլ տեղեկատվության, պետք է պարունակի հետևյալ տվյալները.

1) ընդունելությանը ներկայացվող պահանջները.

2) ընդունելությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, այդ թվում՝ հարկային մարմնի ղեկավարի կողմից հաստատված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձևանմուշը.

3) ընդունելության տեղերի քանակը:

~~5. Ընդունելության տեղերի քանակը սահմանվում է կառուցվածքային փոփոխության ենթարկված կամ նոր ստեղծված կառուցվածքային ստորաբաժանման հաստիքների քանակից քսան տոկոս ավելի չափով: Ընդ որում, եթե ընդունելության տեղերի քանակը հաստիքների քանակից քսան տոկոս ավելի չափով հաշվարկման արդյունքում, ստացվում է կոտորակային թիվ, ապա տեղերի քնակակը ավելացվում է լրացուցիչ մեկ տեղով:~~5.–Եթե ընդունելության արդյունքում մասնակիցները հավաքում են հավասար միավորներ, ապա ընդունելության տեղերի քանակը կարող է ավելացվել համապատասխան հավասար միավորներ ստացած մասնակիցների թվով:

6. Ընդունելությունն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց:

7. Թեստավորման պահանջները սահմանում է հարկային մարմնի ղեկավարը, որով սահմանվում են թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձևավորելու պահանջները, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, թեստավորման հաղթահարման համար անհրաժեշտ նվազագույն միավորը:

8. Ընդունելության երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում հարկային մարմնի ղեկավարի կողմից սահմանված թեստավորման հաղթահարման համար անհրաժեշտ նվազագույն և դրանից բարձր միավորներ ստացած անձինք:

9. Հարցազրույցն անցկացնում է հարկային մարմնի ղեկավարի կողմից ձևավորած հանձնաժողովը: ~~Հանձնաժողովը կազմված է առնվազն հինգ անդամից: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ֆինանսների և էկոնոմիկայի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմիններից մեկական ներկայացուցիչ:~~

10. Հարցազրույցի կազմակերպման համար ձեվավորված հանձնաժողովը դիմողների լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը հաշվի է առնվում ընդունելության հարցազրույցի փուլը հաղթահարած մասնակիցներին որոշելու համար:

11. Հարկային ծառայողի պատրաստման դասընթացի կազմակերպման կարգը, այդ թվում՝ դասընթացի բովանդակությունը, տեվողությունը, դասընթացի ընթացում քննությունների եվ ավարտական քննության կազմակերպման, այդ թվում՝ ավարտական քննական հանձնաժողովի կազմավորման կարգը, դասընթացի արդյունքներն ամփոփելու ~~կարգը~~, դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու չափանիշները սահմանում է հարկային մարմնի ղեկավարը: Դասընթացը պետք է պարունակի նաև բարեվարքությանը վերաբերող կրթական բաղադրիչ:

12. Հարկային ծառայողի պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած անձանց ուսումնական ~~հաստատության~~կենտրոնի կողմից էլեկտրոնային եղանակով տրամադրվում է դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու հավաստագիր, որի ձեվը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը:

13. Հարկային մարմնի ղեկավարի սահմանած կարգով հարկային ծառայողների պատրաստումներ կարող են անցկացվել նաև առանձին պաշտոններ զբաղեցնելու համար:

Հոդված 17.2.- Հարկային ծառայողների թեկնածուների ցուցակը

1. Հարկային ծառայողի պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու հավաստագիր ունեցող անձինք ընդգրկվում են հարկային մարմնի կողմից վարվող հարկային ծառայողների թեկնածուների ցուցակներում՝ դասընթացի ավարտին իրենց կողմից առավել բարձրից ցածր միավորներ հավաքելու սկզբունքից ելնելով: Ընդ որում, սույն օրենքի 17.3-րդ հոդվածով նախատեսված կարգով պաշտոնի նշանակումը հիմք չէ անձին ցուցակից հանելու համար:

2. Հարկային ծառայողների թեկնածուների ցուցակում ընդգրկելու, ցուցակներից հանելու և ցուցակների վարման կարգը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը:

~~2~~3. Հարկային ծառայողների թեկնածուների ցուցակում միանգամյա ընդգրկված լինելու առավելագույն ժամկետը ~~երկու~~երեք տարի է: Ցուցակում ընդգրկված լինելու առավելագույն ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրը թեկնածուն ինքնաշխատ եղանակով հանվում է ցուցակից: Հարկային ծառայողների թեկնածուների ցուցակի թափուր համարները լրացվում են հաջորդաբար՝ նվազման կարգով ինքնաշխատ եղանակով:

Հոդված 17.3.- Հարկային- ծառայության պաշտոնի նշանակումը

1. Հարկային ծառայության պաշտոնին նշանակումն իրականացվում է ~~Հարկային~~հարկային ծառայողների թեկնածուների ցուցակներում ներառված անձանցից և վերապատրաստում անցած անձանցից սույն հոդվածով նախատեսված հարցազրույցի միջոցով:

2. Հարցազրույցի հրավիրում են՝

1) հարկային ծառայողների թեկնածուների ցուցակում ընդգրկված,- հարկային- ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին բավարարող 5 ամենաբարձր միավորներ ունեցող բոլոր անձինք: Եթե սույն կետի պահանջներին բավարարող անձինք հրաժարվում են մասնակցել հարցազրույցին, ապա հարցազրույցի հրավիրվում են հաջորդաբար ավելի բարձր միավորներ ունեցող անձինք~~:~~.

2) վերապատրաստում (այդ թվում՝ առաջխաղացման նպատակով) անցած և տվյալ պաշտոնում նշանակվելու համար դիմում ներկայացրած անձինք:

3. Հարցազրույցի անցկացման նպատակով ձեվավորվում է հանձնաժողովը: ~~Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ֆինանսների և էկոնոմիկայի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմիններից մեկական ներկայացուցիչ:~~ Հարցազրույցին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաեւ հոգեբան:

4. Հարցազրույցի նպատակն է հարկային ծառայողի պաշտոնում արդյունավետ գործելու համար հարկային ծառայողի թեկնածուի հմտություններն ու որակները բացահայտելը: Անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտվում են թեկնածուի մասնագիտական աշխատանքի փորձառությունը, հարկային ծառայող դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, հարկային ծառայությանը վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, վարվեցողություն, պատասխանատվության զգացում, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ եւ հարկային ծառայողի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ) գնահատելու միջոցով:

5. Հարցազրույցից առաջ՝ հարցազրույցի հանձնաժողովի որոշմամբ հարցազրույցի հրավիրված թեկնածուները կարող են անցնել հոգեբանական թեստավորում: Հոգեբանական թեստը կազմվում է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հատկանիշները գնահատելու նպատակով, եւ դրա արդյունքն ստացվում է ըստ նախապես մշակված էլեկտրոնային համակարգի: Հարկային

մարմնի ղեկավարը հաստատում է հոգեբանական թեստավորման չափանիշները եւ անցկացման կարգը եւ ապահովում է թեստավորման անցկացման համար անհրաժեշտ պայմանները: Թեստի արդյունքներն ունեն խորհրդատվական նշանակություն, տրամադրվում են թեկնածուին եւ հանձնաժողովին:

6. Հարցազրույցի փուլը հաղթահարում է մեկ մասնակից: Հարցազրույցի արդյունքում հանձնաժողովը հարկային մարմնի ղեկավարին է ներկայացնում եզրակացություն հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ՝ նշելով հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին:

7. Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմնի ղեկավարը հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնի:

8. Հարցազրույցի կազմակերպման եւ անցկացման կարգը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը, ինչպես նաեւ հարցազրույցի հանձնաժողովի կազմը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը:

9. Հարկային ծառայության պաշտոններում պաշտոնի նշանակում եւ պաշտոններից ազատում է հարկային մարմնի ղեկավարը:

10. Հարկային ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձը պաշտոնի նշանակվում է մինչեւ ինն ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

~~11. Հարկային ծառայողի առաջխաղացումն իրականացվում է տվյալ պաշտոնի խմբի համար նախատեսված վերապատրաստումն անցնելուց հետո սույն հոդվածով նախատեսված հարցազրույցի միջոցով:~~

Հոդված 4. Օրենքի 19.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 19.1. Հարկային ծառայության կադրերի ռեզերվը, կատարողականի գնահատումը, վերապատրաստումը

1. Հարկային ծառայության կադրերի ռեզերվի, կատարողականի գնահատման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

2. Հարկային բոլոր ծառայողները ենթակա են ~~կառավարության~~հարկային մարմնի ղեկավար սահմանված կարգով պարտադիր վերապատրաստման~~ հարկային մարմնի ուսումնական հաստատությունում հարկային մարմնի ղեկավարի սահմանած պարբերականությամբ, բայց~~ ոչ ուշ, քան 3 տարին մեկ անգամ:

~~3. Վերապատրաստման ծրագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները տարանջատվում են ըստ հարկային ծառայության պաշտոնների խմբերի:~~

~~4. Վերապատրաստման ծրագիրը~~3. Հարկային ծառայողների առաջխաղացման նպատակով հարկային մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով կարող են կազմակերպվել նաև հարկային ծառայողի պաշտոնի խմբի համար կամ կառուցվածքային ստորաբաժանման առանձնահատկություններով պայմանավորված վերապատրաստման դասընթացներ, որոնք հաջողությամբ ավարտելու դեպքում կարող են հիմք հանդիսանալ հարկային ծառայողի ծառայողական առաջխաղացման համար՝ սույն օրենքի 17.3-րդ հոդվածով սահմանված հարցազրույցի միջոցով նշանակում կատարելու համար: Ընդ որում, սույն մասով նախատեսված վերապատրասոումը հաջողությամբ ավարտելու հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ նաև հարկային ծառայողին հարկային ծառայության մեկ այլ հավասարազոր պաշտոնի նշանակման համար:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված վերապատրաստման ծրագրերի բովանդակութանը ներկայացվող պահանջները կարող են տարանջատվել ըստ հարկային ծառայության պաշտոնների խմբերի և կառուցվածքային ստորաբաժանումների:

5. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված վերապատրաստման ծրագրերը պետք է պարունակեն բարեվարքության համակարգին վերաբերող կրթական բաղադրիչ՝ ըստ հարկային ծառայության պաշտոնների խմբերի:

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված վերապատրաստման ծրագրերի բովանդակութանը ներկայացվող պահանջները սահմանում է հարկային մարմնի ղեկավարը:

~~6~~7. Վերապատրաստման ծրագիրը(այդ թվում առաջխաղացման) հաջողությամբ ավարտելու դեպքում հարկային մարմնի ուսումնական ~~հաստատության~~կենտրոնի կողմից էլեկտրոնային եղանակով տրամադրվում է ծրագիրը հաջողությամբ ավարտելու հավաստագիր, որը ~~կարող է հիմք հանդիսանալ հարկային ծառայողի առաջխաղացման համար~~գործում է 3 տարի ժամկետով:

Հոդված 5.- Օրենքը լրացնել 25.1-րդ հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

Հոդված 25.1. Հարկային ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության ժամանակ

1. Համապատասխան մարմնի ~~վերակազմակերպման,~~կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության դեպքում- հարկային- ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝

1) հարկային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելության թեստավորման կամ հարցազրույցի փուլը չհաղթահարելը.

2) դասընթացը հաջողությամբ հաղթահարած չհամարվելու արդյունքում հարկային ծառայողների թեկնածուների ցուցակներում չներառվելը.

3) հարկային ծառայության պաշտոնի սույն օրենքի 17.3-րդ հոդվածով սահմանված կարգով չնշանակելը.

4) վերապատրաստման ծրագրին երկու անգամ անընդմեջ չմասնակցելը կամ վերապատրաստման արդյունքում երկու անգամ անընդմեջ վերապատրաստման ծրագիրը հաջողությամբ ավարտելու հավաստագիր չստանալը.

5) հաստիքների կրճատումը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված պաշտոնից ազատման հիմքերը կիրառելի են միայն կառուցվածքային փոփոխության ենթարկվող ստորաբաժանումների հարկային ծառայողների պաշտոնից ազատման հարաբերությունների նկատմամբ:

3. Հարկային ծառայողին պաշտոնից ազատելու հիմք է նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական մարմնի վերակազմակերպումը, եթե այն ուղեկցվում է հաստիքների կրճատմամբ, կամ գործունեության դադարեցումը:

4. Հարկային ծառայողները հարկային ծառայողի պատրաստման դասընթացին և վերապատրաստմանը մասնակցելու դեպքում դասընթացին մասնակցության ամբողջ ժամանակահատվածում պահպանում են իրենց աշխատատեղը և հիմնական աշխատավարձը:

Հոդված 6. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) սույն օրենքի 25.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերը.»:

Հոդված 7. Օրենքը լրացնել նոր 3.1-րդ գլխով հետեւյալ բովանդակությամբ.

ԳԼՈՒԽ 3.1.

~~ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ~~
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հոդված 26.2. Ուսումնական ~~հաստատությունը~~կենտրոնը

1. Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի ուսումնական ~~հաստատության~~կենտրոնի (այսուհետ՝ Ուսումնական ~~հաստատություն~~կենտրոն) գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

2. Ուսումնական ~~հաստատությունը~~կենտրոնը, սույն օրենքին և իր կանոնադրության նպատակներին համապատասխան, կազմակերպում է՝

1) հարկային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց մասնագիտական վերապատրաստումը (այդ թվում՝ առաջխաղացման ~~համար անհրաժեշտ~~նպատակով վերապատրաստումը).

2) հարկային ծառայության առանձին պաշտոններ զբաղեցնելու համար հարկային ծառայողների պատրաստումը.

3) ~~հարկայաին~~հարկային ծառայողի պատրաստման դասընթացի իրականացումը,

4) հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով ուսուցումը.

5) այլ մասնագիտացված դասընթացներ և կրթական ծրագրեր:

3. Ուսումնական ~~հաստատությունը~~կենտրոնը, այդ թվում՝ հարկային ծառայողների պատրաստումներն ու վերապատրաստումները ֆինանսավորվում են պետական բյուջեից, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Հոդված 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022թ հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի~~՝~~:

2. Սույն օրենքը կառուցվածքային փոփոխությունների չենթարկվող ստորաբաժանումներում պաշտոնների նշանակման մասով ուժի մեջ է մտնում 2024թ հունվարի 1-ից: ~~Մինչև 2025թ~~Մինչեւ 2024թ. հունվարի 1-ը կառուցվածքային փոփոխությունների չենթարկվող ստորաբաժանումներում նշանակումներ կատարելու հարաբերությունները կարգավորվում են մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող կարգավորումներով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ *Կ-116-10.12.2021-ՏՀ-011/1*) ԵՎ «ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ *Կ-116[1]-10.12.2021-ՏՀ-011/1*) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Կառավարություն	Հարկային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 1-Ին հոդվածով փոփոխվող 12-րդ հոդված և Մաքսային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդվածով փոփոխվող 8-րդ հոդված	Նախագծերի 1-ին հոդվածներով առաջարկվող փոփոխությամբ սահմանվում է, որ մաքսային կամ հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն համապատասխան հավաստագիր ունեցող, ցուցակներում ընդգրկված անձինք, սակայն նախագծերի մեկ այլ հոդվածներով խոսվում է, որ վերապատրաստում անցած անձինք ևս կարող են զբաղեցնել համապատասխան պաշտոններ: Ուստի, տարընկալումները բացառելու նպատակով առաջարկվում է նախագծերի 1-ին հոդվածները հստակեցնել և սահմանել, որ հարկային/մաքսային ծառայության պաշտոն կարող է զբաղեցնել կամ պատրաստման դասընթացը ավարտած, համապատասխան հավաստագիր ունեցող և թեկնածուների ցուցակներում ընդգրկված անձը կամ անհրաժեշտ վերապատրաստում անցած անձը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ Կառավարություն	Հարկային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 17.1-րդ հոդված և Մաքսային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող 8. 1-րդ հոդված	Առաջարկվում է հանել ընդունելության տեղերի քանակի սահմանման վերաբերյալ օրենքի պահանջը և այն հետագայում կարգավորել ենթաօրենսդրական ակտով: Հակառակ դեպքում եթե օրինակ առաջին անգամ պատրաստման դասընթաց անցկացնելուց հետո համալրվի նոր ստեղծվող ստորաբաժանման հաստիքների 80%-ը, ապա մյուս անգամ դասընթաց կազմակերպելու համար պարզ չի լինելու, թե ինչպես պետք է սահմանվեն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ընդունելության տեղերը, արդյո՞ք նորից ստորաբաժանման հաստիքների քանակ +20%, թե այնուամենայնիվ այլ չափ:		
3.	ՀՀ Կառավարություն	Հարկային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 17.1-րդ հոդված և Մաքսային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող 8. 1-րդ հոդված	Նշված հոդվածների 3-րդ մասերում սահմանել, որ ընդունելությանը չի կարող մասնակցել այն քաղաքացին, որը չի բավարարում նաև բարձրագույն կրթության պահանջին, քանի որ այդ պահանջը ամրագրված է 1-ին հոդվածներով առաջարկվող փոփոխություններում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ Կառավարություն	Հարկային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 17.1-րդ և 17.3-րդ հոդվածներ և Մաքսային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող 8. 1-րդ և 8.3-րդ հոդվածներ	Առաջարկվում է նշված հոդվածներում ընդունելության 2-րդ փուլի համար նախատեսված հարցազրույցի և հետագայում պաշտոնի նշանակման հանձնաժողովների կազմը չթվարկել օրենքով: Դրանից հանել էկոնոմիկայի և ֆինանսների բնագավառում լիազոր պետական մարմինների ներկայացուցիչների պարտադիր ընդգրկման վերաբերյալ կարգավորումները՝ այդ հարաբերությունները հետագայում կարգավորելով ենթաօրենսդրական ակտով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	ՀՀ Կառավարություն	Հարկային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 17.2-րդ և Մաքսային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող 8. 2-րդ հոդված	Նախագծերում ամրագրել, որ դաընթացի հաջողությամբ ավարտելու և թեկնածուների ցուցակներում ընդգրկվելու դեպքում քննարկվող օրենքների համապատասխան հոդվածներով սահմանված կարգով պաշտոնի նշանակումը հիմք չէ անձին ցուցակից հանելու համար: Այս առաջարկի նպատակը նա է, որպեսզի կառուցվածքային կրկնակի կամ հաջորդկական փոփոխությունների կատարման ժամանակ արդեն իսկ մեկ անգամ նախագծերով նախատեսված գործընթացներով անցած անձինք, ստիպված չլինեն կրկին անցնել նույն գործընթացով: Միաժամանակ թեկնածուների ցուցակներում ընդգրկված լինելու	Ընդունվել է:	Ընդունվել է:

			միանգամյա ժամկետը սահմանել 3 տարի երկու տարվա փոխարեն, այն համապատասխանեցնելով վերապատրաստման ժամկետներին:		
6.	ՀՀ Կառավարություն	Հարկային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 19.1-րդ և Մաքսային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդված	Հոդվածներում հստակ չեն առաջխաղացման նպատակով անցկացվող վերապատրաստումներին վերաբերող կարգավորումները: Առաջարկվում է լրացնել նոր մաս՝ սահմանելով, որ հարկային/մաքսային ծառայողների առաջխաղացման նպատակով մաքսային մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով կարող են կազմակերպվել նաև հարկային/մաքսային ծառայողի պաշտոնի խմբի համար կամ կառուցվածքային ստորաբաժանման առանձնահատկություններով պայմանավորված վերապատրաստման դասընթացներ, որոնք հաջողությամբ ավարտելու դեպքում կարող են հիմք հանդիսանալ հարկային/մաքսային ծառայողի ծառայողական առաջխաղացման համար: Միաժամանակ ամրագրել, որ վերապատրասոումը հաջողությամբ ավարտելու հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ նաև հարկային/մաքսայաին ծառայողին մաքսային ծառայության մեկ այլ հավասարազոր պաշտոնի նշանակման համար: Բացի այդ, առաջարկվում է նախատեսել, որ վերապատրաստման ծրագրերի բովանդակութանը ներկայացվող պահանջները կարող են տարանջատվել ոչ միայն ըստ մաքսային ծառայության պաշտոնների խմբերի, այլ նաև ըստ կառուցվածքային ստորաբաժանումների:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	ՀՀ Կառավարություն	Հարկային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 3.1-րդ և Մաքսային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ	Նշված գլուխներում և նախագծերի ամբողջ տեքստում «ուսումնական հաստատություն» բառերը և դրանց բոլոր հոլովաձեվերը փոխարինել «ուսումնական կենտրոն» բառերով և համապատասխան հոլովաձեվերով, քանի որ ուսումնական հաստատությունների գործունեությունը	Ընդունվել է:	Ընդունվել է:

		կատարելու մասին օրենքի նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 2.1-րդ գլխեր	կարգավորվում է և դրա նկատմամբ պահանջները սահմանվում են կրթության բնագավառի համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերով:		
8.	ՀՀ Կառավարություն	Հարկային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 25.1-րդ և Մաքսային ծառայության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 6-րդ հոդվածով լրացվող 22.1-րդ գլխեր	Նշված հոդվածներում հստակեցնել, որ խոսքը գնում է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության դեպքում մաքսային կամ հարկային ծառայողների պաշտոնից ազատելու հետ կապված հարաբերություններին և հենց մարմնի վերակազավորումը չի հանգեցնի ամբողջը աշխատակազմը նախագծերով նախատեսված նշանակման կամ վերապատրաստման գործընթացներով անցկացնելու համար: Միաժամանակ սահմանել, որ հարկային/մաքսային ծառայողին պաշտոնից ազատելու հիմք է նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական մարմնի վերակազմակերպումը, եթե այն ուղեկցվում է հաստիքների կրճատմամբ, կամ գործունեության դադարեցումը:	Ընդունվել է:	Ընդունվել է: